ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ՄՏՔԻ ՀՈՒԾԱՐՅԱՆ

Համաշխարհային պատմության մասին խոսելիս, շատերիս միտքն ակամայից թեւածում է քաղաքական իրադարձությունների թատերաբեմում: Մեր մտապատկերում հառնում են դեպի Տրոյա արշավող հելլենական զինվորները, պոնտոսյան ու պարթեւական տարածքները հեղեղող հռոմեական լեգեոններն ու Բյուզանդական հսկա կայսրության մեջ ծավալված ներքին կատաղի հակամարտություններն ու պալատական խարդավանքները: Սակայն, բարեբախտաբար, այս ամենով չի սահմանափակվում պատմությունը: Պատմությունն ամենից առաջ ու ամենից վեր մարդկային ստեղծագործ մտքի զարգացման հուշարձան է, կոթող, որի հարթաքանդակներից ու գարդանախշերից յուրաքանչյուրը պերճախոս վկայություն է Աստծուց արարված եւ արարման կոչված մարդ արարածի ստեղծագործական հանճարի:

Բնությունն իր վայրի ու բարբարոս համամասնության ու ներդաշնակության մեջ հիացմունքի բացականչություններ է «կորզում» գեղեցիկն ընկալելու ընդունակ հոգիներից, սակայն ոչ պակաս հիացմունքի են արժանի նաեւ մարդկային հոգու ավազանում ծնունդ առած «ձեռակերտ բնության» պատկերները, որոնց, մեկ բառով, *մշակույթ* անվանումն է տրվում:

Մշակույթը մարդկության խանձարուրի մեջ է ծնվել ու հասակ առել: Առաջին իսկ մարդը, որ փորձեց իր կոպիտ ու վտանգաշատ կյանքի պայմանները դրվագող պատկերներ գծագրել անտաշ ու բազմակնճիռ քարանձավաժայռերին, միաժամանակ նաեւ կյանք ու տարազավորում տվեց իր հոգեկան ու զգացական ապրումներին: Նա արարեց, ստեղծեց... Բնության ու կենցաղային երեւույթներին սեփական գնահատականը տվեց, մի խոսքով՝ յուրովսանն «մշակեց» այն: Երբ ներքին հույզերն ու մտահղացումներն այլոց փոխանցելու եւ հաղորդակից դարձնելու ձգտումն անտանելիորեն մեծացավ, մարդը կրկին արարեց...: Նա «մշակեց» լեզուն, խոսքը, բառն ու բանը: Եվ այսպես՝ շարունակաբար: Անհրաժեշտ հանգուցալուծումները ծնվում են շիկացած իրավիճակներում: Այսօր մարդկությունն արդեն տնօրինում է մշակութային հսկա մի ժառանգություն: Եգիպտական հնագույն քաղաքակրթությունից կտակվել են վիթխարի բուրգեր ու դամբարաններ, հանճարեղ ներդաշնակումներ՝ կրոնական պատկերացումներին ընդառաջող գործնական արտահայտության եւ արվեստագիտական նուրբ ճաշակի ու հոտառության: Հունաստանը փայլում էր իր պոլիսներով, վաճառաշահ կենտրոններով, սակայն Ֆիդիասյան քանդակները մթագնում են նույնիսկ հույների առեւտրական ու քաղաքական պատմության ամենանշանակալի նվաճումները: Մշակութային նվաճումները բազմապատկվում էին Էվրիպիդեսյան, Սոֆոկլեսյան ու Արիստոֆանեսյան հանճարով:

Կարելի է անվերջ թվարկել մշակութային օրրաններ եղած այն երկրների

անվանումները, որոնց ազգային ու համամարդկային նշանակության արժեքները նորանոր եռանդ ու պաթոս պետք է հաղորդեին ու հաղորդում են գալիք սերունդներին:

Որպես ընդհանուր մարդկության ընտանիքի մի ճյուղը, հայ ժողովուրդը նույնպես ունի իր անգնահատելի վաստակը համաշխարհային քաղաքակրթության հոգեմտավոր գանձարանում: Տակավին Պատմահայր Խորենացին, գիտակցելով, որ հայ ժողովրդի պատմական անցյալը անմասն չէ նշանակալի իրադարձություններից, գրում էր. *«... թէպէտ եւ եմք ածու փոքր, եւ թուով յոյժ ընդ փոքրս սահմանեալ, եւ զօրութեամբ տկար, եւ ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ՝ սակայն բազում գործք արութեան զգաւնին գործեալ եւ ի մերում աշխարհիս»:* Նույն Խորենացին իր ավագ ու կրտսեր ժամանակակիցներով, սրտակից ու գաղափարակից ժառանգորդներով եկավ բազմապատկելու այդ արիության գործերը:

Հինգերորդ դար... Բացառիկ ու դարակազմիկ իրադարձությունների ու դեպքերի մի ժամանակահատված, երբ հայոց մշակույթը թեւակոխում է որակականորեն բարձր մի ոլորտ: «Այր մի Մաշտոց»՝ հայացքը հառած երկնքի խորախորհուրդ անսահմանությանը, երկնում է հայոց «նորոգ ու սքանչելի» գրերը: Ագաթանգեղոսը ջերմ կրոնասիրությամբ հյուսում է Հայոց ամբողջական Դարձի պատմությունը: Եղիշեն ոսկեղենիկ բարբառով ներբողում է Ավարայրյան սխրանքը Վարդանանց քաջերի: Փավստոս Բուզանդը ժողովրդական պարզ ու վճիտ բարբառով արձանագրում է հայոց կյանքի մռայլ ու գունեղ էջերը:

Առաջանում են ժամանակները՝ ծնունդ տալով նորանոր գլուխգործոցների: Գեղաձիծաղ Վանա ծովի ափին, մի մութ խցում, հոգին երկնային արեւով առլեցուն, Նարեկա վանքի ճգնավորը հավատո բուրվառով «ի խորոց սրտի» հեծեծալից իր խոսքն է վերառաքում «առ Տեսանողն ամենայնի»: Ներսես Շնորհալին մտքի վրձինն է թաթախում իր ժողովրդի ցավի ու տառապանաց ավազանի մեջ. «Ընկալ զիս գթած, ընկալ ողորմած, ընկալ մարդասէր»: Պատմագրության ու ընդհանրապես հայ միջնադարյան գրականության սկզբնավորումից ոչ շատ անց, զարգացման ու ինքնատիպության բավականին բարձր մակարդակի է հասնում հայկական ճարտարապետությունը: Արվեստի տեսաբաններից մեկը բանաստեղծական լեզվով ճարտարապետությունը կոչել է *«քարերի պար»*:

«Քարերի պարը» բոլոր ժամանակներում գեղագիտական մեծ հաճույք է պարգեւել այս պարի սիրահարներին ու երկրպագուներին: Հայոց քարերի պարը, ծնունդ առնելով անհիշելի ժամանակներից, անանխընթաց բարձունքի հասավ է դարում, երբ հայկական պարեղանակների ներքո քարերը նոր ու հաղթական ընդվզումներ ունեցան անձեռակերտ բնության դեմ: Հողի կրծքից վեր խոյացան Ս. Հռիփսիմեի, Ս. Գայանեի, Զվարթնոցի տաճարները՝ ամեն մեկը յուրօրինակ արվեստայնությամբ: Հետագա շրջաններում կառուցվեցին նաեւ բազմաթիվ ուրիշ եկեղեցիներ ու տաճարներ. Անիում՝ քարեղեն պարեր, Արցախում՝ Գանձասար ու Դաղիվանք, Սյունիքում՝ Տաթեւ ու Նորավանք... Վանքեր, որտեղ կրոնական պաշտամունքը զուգակցվել է գիտա-կրթական բեղուն գործունեության հետ: Հայ միջնադարյան դպրոցները, որոնք գտնվում էին վանքերի հովանու ներքո, հսկա քայլերով առաջ էին մղում հայ մշակույթի ոսկեզօծ անիվը: Վանքերում ու եկեղեցիներում ամենօրյա պաշտամունքների ժամանակ գործածվում էին խաչեր

ու սկիհներ. պատարագչի զգեստի մաս կազմող խույրեր. թագեր. եմիփորոններ ու փորուրարներ. արտախուրակներ ու վակասներ. բուրվառ ու ճաճանչ. որոնք. գործնական նշանակությունից զատ. արվեստագիտական շեշտված ճաշակի ու հմտության արտահայտություններ էին եւ են:

Աստծու տաճարներում առօրյա գործածության ծիսա-արարողական առարկանեոն ամենայն բծախնդրությամբ ու նրբաճաշակությամբ էին ընտրվում: Նույնը վերաբերում է նաեւ մանրանկարչությանը: Ավետարանների. Շարակնոցների. Գանձարանների եւ ձեռագիր մյուս ժողովածուների Տերունական պատկերների. խորանների. լուսանցազարդերի ծաղկմամբ գրչության արվեստին զուգահեռ մեծ վերելք է ապրում մանրանկարչությունը: Առաջին հայացքից պարզ ու միամիտ ստեղծագործական փորձեր կարող են նկատվել այս դրվագումներից շատերը՝ փոքր-ինչ տձեւ ուրվագծումներով: Սակայն խորհրդաբանական կուռ համակարգի ու մանրանկարչական արվեստի պարտադրած կաղապարային որոշակի կանոնների մասին պատկերացումը լիարժեքորեն ըմբռնել են տալիս այս ինքնատիպ արվեստի ողջ փայլը. որով Ծաղկազարդն ու Զատիկը. Աստվածածնի Ավետումն ու Համբարձումը եւ Տերունական ու բազմաբնույթ այլ մանրանկարները համապատասխան գունային ու նկարագրային տարազավորում են ստանում:

Մեկ ակնարկում թեեւ հնարավոր չէ հայկական մշակույթի ամբողջական պատկերը ներկայացնել. սակայն առավել դժվար է չանդրադառնալ Հայ Եկեղեցու շարականներին: «Որք զծորանս հոգւոյն արբին. եւ ընդ ժամանակս ժամանակս երգեցին զեղանակաւոր երգս շարականաց»՝ ահա շարականագիրների ոգեշնչման աղբյուրը. աղբյուր. որը հաղթականորեն հորդում է. «Յաղթական քեզ օրհնութիւն. Տէր. որ զխորոց ծովուն հերձեր զջուրն». աղբյուր. որ «մեղաց ծովի» խորքերում «տարաբերեալ ծփացողներին» ու «մահվան հովիտներում» դեգերողներին «կենաց ի կեանս» ու «դալար մարգագետիններ» է առաջնորդում:

Այսօր այս արժեքները մեզ նաեւ առաջնորդում ու մղում են դեպի ստեղծագործական նորանոր որոնումների. մղում են «հնի. քայց ոչ հնացեալ»-ի պեղմանը. անցյալի վերագնահատման՝ ներկան բարվոքելու ու ապագան հեռանկարելու ազնիվ ձգտումով:

Հռոմեական հզոր կայսրության անկման պատճառների շարքում առաջադրվել են ամենատարբեր ու բազմազան վարկածներ ու մոտեցումներ. սակայն դրանցից մեկը. որ ասվել է ոչ թե պատմաբանի. այլ հոգեբանի կողմից. միշտ պահպանելու է իր ճշմարտացիությունը. *«Հռոմը կործանվեց.*- ասում է նա.- *որովհետեւ հռոմեացիները կորցրին հարգանքը իրենց անցյալի նկատմամբ»*: Անցյալի նկատմամբ հարգանքի բացակայությունը համարժեք է ապագայի նկատմամբ անթույլատրելի անփութություն դրսեւորելուն: *Անցած ճամփան չընդգրկող հայացքը մշուշոտ ու խամրած գույներ է հագնելու:* Սակայն հարգանքն անցյալի նկատմամբ սոսկ զգացական ապրում ու տեսական ըմբռնում չէ. այլ գործնական ճիգ: Ահա ջանք ու ճիգ դարձած այսպիսի հարգանքը «հարկադրեց» Վեհափառ Հայրապետին ոչ միայն բավարարվելու անցյալի մշակութային արժեքների «կրավորական սքանչացում»-ով. այլեւ ողջ քրիստոնյա աշխարհին հաղորդակից դարձնելու հայ

ժողովրդի ու Հայ Եկեղեցու մշակույթին: *«Նորկա դարը հաղորդակցության մի շրջան է. որը չի հանդուրժում կղզիացում. մեկուսացում. առանձնացում»*.- գրում է Վեհափառ Հայրապետը: Մշակութային հարստության մատուցումը միջազգային հանրությանը. ավելի ճիշտ՝ ցուցահանդեսների կազմակերպումները. բացառիկ առիթներ են ոչ միայն քաղաքակրթությանը ներկայանալու. այլեւ քաղաքակրթության նյութական միջոցների ընձեռած հնարավորությունների չարաշահումներով շփացած որոշ շրջանակների հարկադրանոք արտաբերել տալու. որ. բացի աշխարհագրական քարտեզագրությունից. գոյություն ունի նաեւ մշակութային նմանատիպ մի անուրանալի երեւույթ. որի չափանիշներով աշխարհագրական թվացյալ «վտիտությունը» շատ հաճախ ուղիղ համեմատական է մշակութային հարուստ ժառանգության հետ:

Մշակույթի հանդեպ վերաբերմունքում արտացոլվում է նաեւ անցյալի արժեքների նկատմամբ մեր ունեցած հարգանքի աստիճանը: Դարերի ընթացքում. հատկապես բարձր քաղաքակրթություն ունեցող ժողովուրդների համար. մշակույթն է եղել այն զորեղ ուժը. որը հաճախ հարթել է քաղաքական տարաձայնությունները եւ անգամ իշխողին ենթարկել հպատակին: Պողոս Առաքյալի «Գիրը սպանում է հոգին՝ ապրեցնում» նշանավոր խոսքերի հետեւողությամբ կարող ենք ասել. որ քաղաքականությունը բաժանում է. մշակույթը՝ միավորում:

Նաեւ քաղաքական շատ համաձայնագրեր մեռյալ տառ ու պայմանագրի կետ են մնում. եթե չեն հանգում համարժեք մշակութային համագործակցության: Այսպիսով. մշակութային կարետրագույն միջոցառումները. դուրս գալով տվյալ եանդիսության շրջանակներից. վերածվում են տեղի ունեցած քաղաքական փոփոխությունների քաղաքակրթական հավաստմանը:

Նույն կերպ. մարտի 24-ին Վատիկանի Սիքստինյան սրահում բացված «Հայաստան-Հռոմ» ցուցահանդեսը վերջին տասնամյակներին Եկեղեցիների եամեղբայրության շրջանակում. նախ՝ երջանկահիշատակ Վազգեն Ա-ի եւ Հռոմի Պողոս Զ Պապի 1970 թ. մայիսին. ապա Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի 1996 թ. դեկտեմբերին Հովհաննես-Պողոս Բ Պապի հետ ունեցած հանդիպումներով. Հայոց Եկեղեցու եւ Հռոմի միջեւ ձեւավորվող նոր հարաբերությունների մշակութային վավերացումը կարելի է համարել: Այն արտացոլվել է անգամ ցուցահանդեսի անվանման մեջ. ուր. ի տարբերություն գերագահության. անսխալականության. հերձվածողության եւ քրիստոնեական աշխարհը ներքուստ ջլատող ու հյուծող համանման արտահայտությունների վրա խարսխված ըմբռնումների եւ հավակնությունների. որպես համարժեք հասկացություններ ներկայացվում են **Հայաստանը եւ Հռոմը**:

Ռազմա-քաղաքական ու տնտեսական շահերի թելադրանքով հին աշխարհն ստեղծել էր երկու նշանավոր ճանապարհներ՝ Մետաքսի մեծ ճանապարհը եւ Հին հռոմեական ճանապարհը. որոնք երկուսն էլ անցնում էին Հայաստանով: Մետաքսի ճանապարհին Հայաստանը տնտեսական խաչմերուկ էր՝ այդ ճանապարհին ձգվող. իրենց ուրույն մշակույթն ունեցող վաղ միջնադարյան հայկական քաղաքներով: Հին հռոմեական ճանապարհին. սակայն. Հայաստանն արեւելյան ու

արեւմտյան աշխարհակալ տերությունների շահերի բախման կիզակետում էր. ուր ռազմական բախումներում իսկ ձեւավորվում էին մշակութային փոխառնչակցությունները. եւ հատկանշական է. որ Արեւելքում վերջին Հելլենիստական մեծ տերությունը Հայաստանն էր. Տիգրան Մեծի թագավորության շրջանում:

Հայաստան եւ Հռոմ

Այս կապակցությունը հայ ժողովրդի համար պատմական ամենատարողունակ արտահայտություններից մեկն է. որը հիշեցնում է դեպի Հին Արեւելքի քաղաքակրթության կենտրոնները շարժվող լեգեոններին. ուրվագծում Հռոմի այն հաղթակամարը. որի վրա փորագրված էր. «Հայաստան՝ Հռոմի դաշնակից»: Այնուհետեւ միասնական կայսրության Արեւելյանի ու Արեւմտյանի տրոհումը պայմանավորեց պատմա-մշակութային ու կրոնական նոր իրողություններ. որոնք Հայաստան-Հռոմ առնչությունները վերածելու էին Հայոց եւ Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցիների հարաբերությունների. սակայն դարձյալ լի հակասություններով. համագործակցությամբ. Կիլիկիայի Հայոց թագավորության շրջանում Արեւելքում ունեցած ընդհանուր շահերով. ապա նորից հակադրություններով. քայց երբ դավանաբանական ամենատուր բախումների ու վիճաբանությունների ընթացքում իսկ աննկատելիորեն մշակութային փոխառնչակցությունների կամուրջներն էին ձգվում՝ Հայաստանից Արեւմուտք տանելով գոթական արվեստին ծնունդ տված ճարտարապետական ձեւերը եւ Հայաստան բերելով ժամանակի աստվածաբանական ընկալումների վրա խարսխված գիտական ըմբռնումները:

Պատմությունը ներկայի է վերածվում անցյալի դասերով եւ մնայուն արժեքներով: Այս առումով վստահաբար կարող ենք ասել. որ «Հայաստան-Հռոմ» ցուցահանդեսը ծնվել է անցյալի դառը դասերից՝ ներկայացնելով հայ ժողովրդի հոգեւոր-մշակութային անանց արժեքները ժամանակային լայն ընդգրկմամբ եւ մշակույթի ամենաբազմազան ճյուղերի ներառմամբ. ինչպես նաեւ ցուցահանդեսի անվանմանը համահունչ ցուցանմուշների ընտրությամբ. որոնք դասական արվեստների մայրաքաղաք Հռոմում կդիտեն բազմահազար ուխտավորներ ու այցելուներ:

Ամփոփելով ասենք. որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի. Երեւանի Մաշտոցի անվան Մատենադարանի. Հայաստանի ու արտասահմանյան տարբեր թանգարանների հավաքածուներում պահվող արժեքների ճաշակավոր ու նպատակային ընդգրկմամբ կազմակերպված «Հայաստան-Հռոմ» ցուցահանդեսը. մշակութային բացառիկ իրադարձություն լինելով Հայոց Եկեղեցու. Հայաստանի Հանրապետության եւ ընդհանրապես հայ ժողովրդի համար. դուրս է գալիս մշակութային միջոցառման ու հանդիսության շրջանակներից եւ. ինչպես ասվում է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքում, ***«Ցուցահանդեսը մեզ գերազանց հնարավորություն է տալիս ավելի պատասխանատու եւ ստեղծագործ կերպով խորհելու մեր ներկա դարի մասին՝ քրիստոնեական անցած տասնյոթ դարերը դարձնելով ներշնչման աղբյուր «Տիրոջ այգում» նոր նվաճումների համար»:***